ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 10.08.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/109

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև բողոքներ քննող անձը) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 20.07.2018թ. թիվ 03/26-3/13297-18 գրությամբ Գարիկ Առաքելյան Ա/Ձ-ին (ՀՎՀՀ 82868445) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ արդարադատության նախարարության 20.07.2018թ. թիվ 10/14/60870-18 գրության հիման վրա, 20.07.2018թ. նախաձեռնել է Գարիկ Առաքելյան Ա/Ձ-ին (այսուհետ՝ նաև Ա/Ձ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>ՀՀ արդարադատության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ արդարադատության նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 20.07.2018թ. թիվ 10/14/60870-18 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ ՀՀ արդարադատության նախարարության 2018 թվականի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգով կազմակերպված «ՀՀԱՆ-ԳՀԾՁԲ-18/12» ծածկագրով աշխատակիցների վերապատրաստման ծառայությունների գնման գործընթացի արդյունքում 2018 թվականի հուլիսի 12-ին գնահատող հանձնաժողովի որոշմամբ առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել Գարիկ Առաքելյան Ա/Ձ-ն, որը 2018 թվականի հուլիսի 17-ին տեղեկացրել է գնահատող հանձնաժողովին՝ գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելու մասին:

Ելնելով վերոգրյալից, ներկայացնում եմ Գարիկ Առաքելյան Ա/Ձ-ի մասին տվյալները և համապատասխան հիմքերը գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Աննա Մխիթարյանը:

3. <u>Գարիկ Առաքելյան Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը դիմել է Գարիկ Առաքելյան Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 20.07.2018թ. թիվ 03/26-3/13297-18 գրությամբ Խորհրդում նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Գարիկ Առաքելյան Ա/Ձ-ն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն վերջինիս կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/109 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 20.07.2018թ. թիվ 03/26-3/13297-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ արդարադատության նախարարության 20.07.2018թ. թիվ 10/14/60870-18 գրությունը, «ՀՀԱՆ-ԳՀԾՁԲ-18/12» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), Գարիկ Առաքելյան Ա/Ձ-ի ներկայացրած հայտը, «ՀՀԱՆ-ԳՀԾՁԲ-18/12» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 12.07.2018թ. նիստի թիվ 2 և 18.07.2018թ. նիստի թիվ 3 արձանագրությունները.

ՀՀ արդարադատության նախարարության կարիքների համար աշխատակիցների վերապատրաստման ծառայությունների գնման նպատակով կազմակերպված «ՀՀԱՆ-ԳՀԾՁԲ-18/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) հայտ է ներկայացրել Գարիկ Առաքելյան Ա/Ձ-ն:

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N3 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀԱՆ-ԳՀԾՁԲ-18/12» գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին:

Հանձնաժողովը 12.04.2018թ. կայացած նիստի N 2 արձանագրության 2.1 կետով արձանագրել է, որ Գարիկ Առաքելյան Ա/Ձ-ի հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

Նույն արձանագրության 5-րդ կետով Հանձնաժողովն արձանագրել է, որ Գարիկ Առաքելյան Ա/Ձ-ի կողմից Ընթացակարգին ներկայացված առաջարկած գինը կազմել է 480,500 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ), իսկ 6.1 կետով՝ որոշել է Գարիկ Առաքելյան Ա/Ձ-ին ճանաչել առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Գարիկ Առաքելյան Ա/Ձ-ն 17.07.2018թ. գրությամբ դիմել է Հանձնաժողովին, հայտնելով, որ Ընթացակարգի շրջանակներում իր կողմից ներկայացված գնային առաջարկը թյուրիմացաբար սխալ է հաշվարկվել, սխալմամբ ներկայացվել է միավորի գին, որի պատճառով անհնարին է դառնում այդ գնով հետագայում հրավերով

նախատեսված ծառայությունների պատշաճ կատարումը: Ելնելով վերագրյալից՝ Ա/Ձ-ն հրաժարվել է 11.07.2018թ. Ընթացակարգին ներկայացված հայտից և խնդրել է Հնաձնաժողովին ըմբռնումով մոտենալ ստեղծված իրավիճակին:

Գնահատող հանձնաժողովը 18.07.2018թ. նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով արձանագրել է, որ Գարիկ Առաքելյան Ա/Ձ-ից ստացվել է տեղեկատվություն գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելու մասին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝

• 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

• 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, հրապարակում է լիազորված մարմինը: Գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մոտ՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը

դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Գարիկ Առաքելյան Ա/Ձ-ն Հանձնաժողովի որոշմամբ ճանաչել է Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից, սակայն 17.07.2018թ. գրությամբ հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ առկա է Գարիկ Առաքելյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված հիմքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետով, 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 20.07.2018թ. թիվ 03/26-3/13297-18 գրությամբ Գարիկ Առաքելյան Ա/Ձ-ին (ՀՎՀՀ 82868445) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. Գարիկ Առաքելյան Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ